

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ՝ Անվտանգության ծառայություն, ՏՏ անվտանգության բաժին

ՊԱՇՏՈՆԸ՝ Մասնագետ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- հիմնական աշխատանք, աշխատանքն անմիջապես սկսելու և անորոշ ժամկետով աշխատելու հնարավորություն
- արտոնությունների բարձր մրցակցային փաթեթ
- մասնագիտական և աշխատանքային առաջխաղացման հնարավորություն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝ ք. Երևան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

Ամերիաբանկը փնտրում է մասնագետ Տեղեկատվական անվտանգության բաժնում աշխատելու համար, ով արդյունավետ կերպով կապահովի Ընկերությունում շահագործվող անվտանգության համակարգերի (տեսադիտման, ահազանգման, մուտքի/ելքի վերահսկման, հակահրդեհային) անխափան աշխատանքը, ինչպես նաև կմասնակցի նոր համակարգերի կառուցմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Բանկում շահագործվող անվտանգության համակարգերի ադմինիստրավորում, ընթացիկ սպասարկում, անխափան աշխատանքի ապահովում, հայտնաբերված խափանումների վերացում
- Նոր բացվող մասնաճյուղերում անվտանգության համակարգերի տեղադրում և կարգաբերում;
- Բանկի ՀՀ մարզերում գտվող մասնաճյուղերի անվտանգության համակարգերի ընթացիկ սպասարկում, հայտնաբերված խափանումների վերացում;

ՆՎԱԶԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ՝

- Բարձրագույն տեխնիկական կրթություն,
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ անվտանգության համակարգերի տեղադրման, կարգաբերման և սպասարկման ոլորտում,
- Անվտանգության համակարգերի և սարքավորումների (Hikvision, Satel) հետ աշխատանքի իմացություն,
- Էլեկտրական սխեմաների ընթերցում;
- Հակահրդեհային անվտանգության, տեսադիտման և ահազանգման ոլորտում նորմատիվ փաստաթղթերի իմացություն;
- Էլեկտրատեխնիկայի իմացություն և օգտագործման հմտություններ (զոդիչի օգտագործում, տեստերով տարբեր տեսակի ստուգումներ);
- Ցանցային համակարգերի կառուցման իմացություն;

- Համակարգչային գիտելիքներ փորձառու օգտագործողի մակարդակով;
- Դատվածության բացակայություն, նաև 1-ին աստիճանի փոխկապակցված անձանց մոտ,
- Բարձր պատասխանատվություն, ոչ ստանդարտ և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, որոշում կայացնելու ունակություն,
- Ոչ նորմավորված աշխատանքային գրաֆիկով աշխատելու պատրաստակամություն,
- Հայերեն, ռուսերեն լեզուների լավ իմացություն, անգլերենի իմացությունը գերադասելի է
- Արդյունավետ հաղորդակցման հմտություններ,
- Ժամանակի կառավարման հմտություններ;
- Վարորդական վկայականի առկայությունը ողջունվում է;

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ՝ Մրցակցային

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝ Բոլոր հետաքրքրված անձիք կարող են մինչև 04.03.2019 լրացնել կայքում գետեղված դիմում/հայտը և կցել ինքնակենսագրությունը՝ նշելով աշխատանքային փորձը, որակավորումը և այն անձանց տվյալները, որոնք կարող են երաշխավորություն տալ, և ուղարկել hr.it@ameriabank.am էլ.փոստին՝ վերնագրում նշելով համապատասխան պաշտոնի անվանումը:

Խնդրում ենք անձամբ չներկայանալ և չզանգահարել:

Դիմումների ընդունման սկիզբ՝ 18.02.19

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 04.03.19

Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած թեկնածուները: